

**ՀԱՅԱՍՏԱՆ 2008. ՃԳՆԱԺԱՄ ԵՎ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

Վարդան Օսկանյան: Շատ ուրախ եմ, որ կարողացանք նման քննարկում կազմակերպել: Ձեկույցում ամփոփված են, երևի թե, երկու տասնյակ մարդկանց տեսակետներ, վերլուծություններ, առաջարկություններ և իհարկե կանխատեսումներ 2009 թ. կապակցությամբ: Ձեկույցի բովանդակության համար միակ պատասխանատվությունը Միվիլիթասս հիմնադրամինն է, այսօրվա մասնակիցները նույնպես պատասխանատվություն չեն կրում: Թեման պատահական չի ընտրվել՝ «Ճգնաժամ և հնարավորություն», որովհետև մենք իրոք հավատում ենք, որ յուրաքանչյուր ճգնաժամ իր հետ բերում է նոր հնարավորություններ: Սա պատմությունը բազմիցս ապացուցել է:

Եթե մենք կարողանում ենք ճգնաժամի ընթացքում ճիշտ մատնանշել, ճիշտ գնահատել իրավիճակը, որովհետև ճգնաժամի դեպքում երևույթները առավել բացվում են և մեզ բոլորիս համար դա առավել տեսանելի է դառնում, երբ այդ պահին մենք ուզում ենք այդ ամենը գնահատել և կարողանալ ճիշտ ուղիները որոնել այդ ճգնաժամից դուրս գալու համար, մենք ճգնաժամից միայն շահում ենք և մեր հասարակությունը, պետությունը կարողանում ենք դնել որակապես նոր հարթակի վրա: Ձեկույցի հիմնական նպատակը սա է լինելու և այսօրվա քննարկումն էլ այդ նպատակն է հետապնդում, որպեսզի մենք կարողանանք լայն տարածում տալ, մտածելու տեղիք տալ և

իշխանություններին և քաղաքական ուժերին և քաղաքացիական հասարակությանը, որպեսզի ներքին պահանջ ձևավորվի, որպեսզի քաղաքական ուժերը այս խնդրին անդրադառնան և իսկապես իրենց շահերը դնեն մի կողմ և առաջնորդվեն ավելի մեծ խնդիրներով:

Ձեկույցի առանցքային երեք թեմաները, երեք ճգնաժամերը հետևյալն են՝ առաջինը ներքին ճգնաժամն է՝ մարտիմեկյան իրադարձությունները, երկրորդը՝ ռուս – վրացական հակամարտությունը, երրորդը՝ գլոբալ տնտեսական ճգնաժամն է: Այս երեքի ազդեցությունը Հայաստանի ներքաղաքական կյանքի վրա, արտաքին խնդիրների վրա, նաև մեր տնտեսության վրա: Սա է զեկույցի հիմնական բովանդակությունը: Այսօր մենք զեկույցը չենք քննարկելու, այն հանձնվել է ձեր դատին, կկարդաք ձեր գնահատականները կտաք: Այսօր մենք քննարկելու ենք զեկույցի առանցքային թեմաները՝ անկախ զեկույցի բովանդակությունից: Ես ուզում եմ սկսել ներքաղաքական իրավիճակից, որովհետև կարծում եմ, որ ամեն ինչ պայմանավորված է հենց դրանով. և մեր արտաքին քաղաքականության խնդիրները և մեր տնտեսության հետագա զարգացումները: Ներքաղաքական իրավիճակը, ես կարծում եմ, այսօր ամենակարևոր, ամենաեական խնդիրներից մեկն է: Ընդհանուր իմ գնահատականը այն է, որ իրավիճակը այնքան էլ բարվոք չէ, լարվածությունը մնում է, իմ գնահատականով՝ նաև խորանում է: Կարծես ինչ-որ տհաճ մթնոլորտ կա օդում, որը ազդում է բոլորիս սրամադրության վրա: Արմեն Ռուստամյանին ես ուզում եմ ներգրավել

այս խոսակցությանը՝ որպես կոալիցիայի անդամ: Արմեն, համաձայն յն ես իմ ինտուիտիվ այս զգացմանը, կոալիցիան տեսնում է այսօր ներքաղաքական իրավիճակը պատկերացնում է, ուզում է բաց աչքերով նայել, գնահատական և լուծումներ տալ:

Արմեն Ռուստամյան: Ես ուզում եմ ընդգծել հենց ճգնաժամ բառը: Շատ կարևոր է, որ իրավիճակը հենց այդպես գնահատվի: Ես դրանից չեմ խուսափում: Շատ հաճախ բանավեճի ընթացքը սկսում է սխալ գնալ, եթե հենց սկզբից ասում ենք խնդիր չկա, ամեն ինչ լավ է: Ես հակված չեմ այդպես նայել, այլ հակառակը համարում եմ որ, այո չենք ասում համընդհանուր, ծայրահեղ աստիճանի հասած ներքին ճգնաժամ, կամ լուրջ խնդիրների ծավալ չենք ուզում ներկայացնել: Հենց առաջին օրերին ընտրություններից հետո ստեղծվեց այնպիսի իրավիճակ, որ շատ պարզ էր որ կա հասարակական ճգնաժամ, ես ինքս այդպես էլ գնահատել եմ: Կարելի է նշել քաղաքական ճգնաժամ, տնտեսական ճգնաժամ, սոցիալական ճգնաժամ, սա հասարակական ճգնաժամի տարրեր են, որը ավելի խորացավ մարտի մեկի, երկուսի իրադարձություններից հետո: Այսինքն մենք հասկանում ենք, որ նախագահական ընտրություններով Հայաստանում նոր փուլ է սկսվում, քսանամյակ է անցել 88 թ.- 2008 թ., այդ քսանամյակը իսկապես իր տրամաբանությունն է ունեցել: Հիմա թե՛ նոր նախագահ է ընտրվում, թե՛ որոշակի լուրջ խնդիրներ են առաջանում պատմական Հայաստանի առաջ: Հայաստանը պետք է պատրաստ լինի այս նոր ժամանակաշրջան մուտք գործելուն: Դրան, ըստ իս, Հայաստանը պատրաստ չէր: Այստեղ առաջացավ լուրջ խնդիր:

Երկու ուղղություն պետք է որդեգրվեր մարտի մեկի իրադարձություններից հետո. ընդհանուր բարեփոխումների լուրջ ծրագիր, երկրորդ սերնդի բարեփոխումներ, որովհետև առաջին սերունդը ավարտել ենք ըստ էության, օրենսդրական դաշտը, մյուս բոլոր պարտավորություններն էլ, որ, ըստ էության, Հայաստանը ստանձնել էր: Մենք ունենք խնդիր. այդ ամենը, որ մենք ստանձնել ենք՝ կյանքի կոչել: Եվ սա պահանջում է բարեփոխումների նոր սերունդ:

Վ. Օ. Այս խոսակցությունը ամբողջությամբ կարելի է հետ տանել հինգ-տասը տարի առաջ և պետք է նշել, որ նման խոսակցություն մենք միշտ էլ ունեցել ենք, յուրաքանչյուր փուլում հարցեր են առաջացել և ասել ենք, որ հաջորդ փուլում այլ կերպ պետք է անել, պետք չէ թույլ տալ խախտումներ անել ընտրություններում, արդեն ո՞րերորդ անգամն է: Իմ մտահոգությունն այն է, որ այս անգամ իրավիճակը իր գազաթնակետին է հասել, որովհետև մեկ խնդիր չէ, բազմաթիվ խնդիրներ են և ահավասիկ այս բոլորը բարդացվում է արտաքին գործոնով՝ ԵՄ կողմից վերջին այս որոշումը, օրինակ: Հայաստանը երբևէ այսպիսի իրավիճակում չի հայտնվել, պատկերացրեք, տնտեսական այս ծանր իրավիճակում, ներքաղաքական այս ծանր պայմաններում հունվարին ԵՄ-ն իսկապես որոշում կայացնի Հայաստանի պատվիրակությանը զրկել ձայնի իրավունքից: Ես կարծում եմ, որ սա ճգնաժամն ավելի կխորացնի, որովհետև սա աննախադեպ երևույթ կլինի: Ի՞նչ ենք այս մասին մտածում: Հովիկ, գիտեմ, որ դու Փարիզում ես գտնվել, նախկինում այս

գործընթացներում ներգրավված ես եղել, ինչ ես կարծում:

Հովհաննես Իգիթյան: Ես համաձայն եմ, որ ճգնաժամը ընդգծում է իրավիճակի թույլ կետերը, և եթե մենք ձեր ասած որևէ մեկից սկսենք, մենք այս կամ այլ ձևով կանրադառնանք այլ թեմաների: Թեկուզ սկսենք տնտեսական ճգնաժամից: Ընդհանրապես տնտեսական ճգնաժամը պահանջում է նախ ներքին կոնսոլիդացիա, երկրորդ՝ վստահություն իշխանությունների հանդեպ և երրորդ՝ միջազգային համբավ: Հիմա սկսենք այս իմ ֆիքսած երևույթները առանձին դիտարկել: Արդյո՞ք Հայաստանում կա վստահություն իշխանությունների հանդեպ, արդյո՞ք այն կետերը, որոնք այսօր փորձում է իրականացնել կառավարությունը ճիշտ են և ո՞րն է այն մարմինը, որը կարող է կառավարությանը այլ տեսակետ հայտնել: Ես և Փարիզում և Բնդոնեզիայում մասնակցել եմ համաշխարհային ճգնաժամերի հետ կապված քննարկումներին, և տարբեր երկրներ տարբեր ձևով են փորձում դա հաղթահարել և հիմնական ուղղությունը սպառողի վճարունակության բարձրացումն է: Հայաստանն անում է հակառակը: Եվ ո՞վ է անում՝ կառավարությունը: Արդյո՞ք մենք ունենք, օրինակ, օրենսդիր մարմին, որը ճիշտ քննարկում է այդ հարցը: Ահա նաև մենք կամաց կամաց գալիս ենք նրան, ինչ նաև մոնիթորինգի հանձնաժողովը ընդգծեց, որ ՀՀ Ազգային ժողովը չի արտացոլում հասարակության մեջ եղած կարծիքները և ուժերը: Եվ նաև ճգնաժամային իրավիճակներում, ես կասեի, ոչ թե վտանգավոր է, այլ աղետ է, որ Հայաստանի նման երկիրը կորցնում է իր համբավը: Ես համաձայն չեմ այդ

պատժամիջոց հասկացողությանը, իրականում ԵԽ-ն որևէ պատժամիջոց չի իրականացնում: Իրականում ԵԽ-ն դա ՆԱՏՕ չէ և նույնիսկ ԵՄ չէ: ԵԽ-ն ուղղակի գնահատական է տալիս և պրոցեդուրայի իներորդ կետով Ֆիքսում է, որ Հայաստանը չի համապատասխանում ԵԽ-ում առկա ժողովրդավարության ստանդարտներին և առաջարկում է որ Հայաստանի պատվիրակությունը զրկվի ձայնի իրավունքից: Բայց շատ ավելի վտանգավոր են այն գնահատականները, որոնք արդեն եղել են և՛ 1532 բանաձևում, որը խոսում է Հայաստանի ԵԽ պարտավորությունների կատարման մասին, և՛ 1609 և՛ 1620-ում: Այսինքն, նշանակություն չունի Հայաստանի պատվիրակությունը կզրկվի թե ոչ: Արդեն ֆիքսված է, որ Հայաստանը ռիսկային երկիր է: Այսինքն Հայաստանը այն երկիրն է, որտեղ, օրինակ, 1609 բանաձևի 6.2 կետում նշված է, որ Հայաստանում դատական իշխանությունը անկախ չէ: Այսինքն եթե այս երկրում օտարերկրյա ներդրող փորձի իր շահերը պաշտպանել դատական կառույցներում, նա չի կարող, որովհետև դատարանները անկախ չեն: Նրանց կասեն և նրանք կանեն այնպես ինչպես ասել են: Եվ հենց մարտի մեկի դատավարությունները ապացուցում են, որ Հայաստանում դատական իշխանություն գոյություն չունի, դա անհեթեթություն է, շոու է, որը փորձում են այդ դատավորները անել:

Վ. Օ. Որոշ երկրներ ավելի արագ են հաղթահարում, որոշ երկրներ՝ ավելի դանդաղ: Ես չեմ ուզում ասել, որ այսօր Հայաստանում ոչինչ չի արվում: Մեր այսօրվա խնդիրը այն է, որ գործընթացները հասցնենք այնպիսի կետի, որ համարենք, որ բացասականից փորձում

ենք անցնել դրականի, որպեսզի կարողանան իշխանությունն ու ընդդիմությունը դրականորեն ներգրավվել այս պրոցեսի մեջ: Գնահատականներ տալիս ես կարող եմ ասել, որ 17 տարիների ընթացքում շատ բան է արվել և շատ բան էլ չի արվել: Այսօր ճգնաժամը ցույց է տալիս, որ այդ չարվածները իրենց բացասական հետևանքն են ունենում մեր հետագա զարգացման խնդիրների վրա: Խորհրդարանը մեր “ամենացավոտ” խնդիրներից մեկն է, որովհետև դա քաղաքական ամբիոն է և այդ ամբիոնը այսօր լավագույնս չի օգտագործվում: Իսկապես մաթեմաթիկոս պետք չի լինել, որ պարզ թվաբանությամբ հասկանանք այն ինչ դու ասացիր: Խորհրդարանը այսօր մեր հասարակության ցանկությունները չի արտացոլում: Եթե մենք նախագահական ընտրությունները վերցնենք և հավատանք այն թվերին որ պաշտոնապես ներկայացվել են, ապա մեր հասարակության 50%-ը դեմ է քվեարկել մեր իշխանություններին: Այդ թվում և դաշնակցության ընտրողները: Եթե վերհիշենք Վահան Հովհաննիսյանի վարած ընտրարշավը, Արթուր Բաղդասարյանինը, նրանց հետևորդները իսկապես ձայն են տվել ընդդիմադիր կեցվածքին և ահավասիկ կոալիցիա է ձևավորվել և ընդհանուր դիրքորոշումներ են որդեգրվում հենց ԱԺ-ում: Վերջ ի վերջո, սրա լուծումը ո՞րն է: Ես ինքս կողմնակից չեմ նոր ընտրությունների, որովհետև քաղաքական դաշտը դրան պատրաստ չէ: Եթե այսօր, վաղը, մի ամիս, երեք ամիս, կամ մի տարի հետո մենք այս վիճակով գնանք ընտրությունների կարծում եմ, որ ոչինչ չի փոխվելու: Ես ավելի մտահոգ եմ որ իշխանությունները սա չեն գիտակցում: Այսօր Ազգային

Ժողովը չի համապատասխանում հասարակության տրամադրություններին: Սա խնդիր է: Մենք պետք է աշխատենք, որ համապատասխան պայմաններ ստեղծենք հաջորդ ընտրությունների համար: Որպեսզի պատկերը ավելի ներդաշնակ լինի: Խնդրեմ Արմեն դու ինչ կարծիքի ես:

Արմեն Դարբինյան: Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել Սիվիլիթասս հիմնադրամին առաջին հրապարակային միջոցառումը կազմակերպելու համար: Կարծում եմ, շատ կարևոր է հայաստանյան հայացք նետել դեպի Հայաստան: Ես կասեի, որ 2008 թ. իհարկե շատ ծանր տարի էր: Բոլոր տեսակի ճգնաժամեր տեղի ունեցան և մեզ անմիջապես հարվածեցին՝ և՛ քաղաքական և՛ սոցիալական և՛ հասարակական ճգնաժամ, որի արտացոլումն էր մարտի մեկը: Պետք է ասեմ, որ մենք բոլոր ճգնաժամերին, որ ականատես եղանք ոչ համարժեք պատասխան ենք տվել, ոչ համարժեք ենք արձագանքել դրանց: Մարտի մեկը համարժեք չգնահատվեց ո՛չ իշխանությունների, ո՛չ հասարակության կողմից: Ես ընդհանրապես կասեի, որ ամոթ է մեր հասարակության համար որ մենք չկարողացանք ազգովի անգամ հիշել մարտի 1-ի գոհերին: Դա, կարծես թե, դուրս մնաց հիմնական հասարակության ուշադրությունից: Դրանից հետո մենք ստեղծեցինք մի շղարշ, որը կոչեցինք կոալիցիա, որը կոչված էր ապահովելու օրենսդիր մարմնի աշխատանքը, բայց ակնհայտ էր, որ դա քաղաքական համաձայնության չի բերելու, որովհետև ձեր ասած 50% մնում է ուժի մեջ և այսօրվա գործելակերպը բացարձակապես չի ապահովում քաղաքական անդորր երկրում և քաղաքական տեսակետների

ներկայությունը քաղաքական և հասարակական դաշտում: Եվ դա է պատճառը, որ պրոցեսը դուրս է գալիս փողոց: Այնուհետև տեղի ունեցավ ռեգիոնալ միջազգային ճգնաժամ, որին մենք կրկին համարժեք չարձագանքեցինք որպես ազգ, պետություն, հարևան: Կարծես թե չգիտակցեցինք մեր տեղը տարածաշրջանում և աշխարհում: Մենք ուշքի եկանք միայն այն պահին երբ ճանապարհային և տրանսպորտային գծերը փակվեցին և մենք հասկացանք որ կարող է սովի մատնվենք այս ռեգիոնալ ճգնաժամի պատճառով: Թե ճգնաժամի սկսելուց, թե ընթացքում մենք որևէ համարժեք քայլ չձեռնարկեցինք խնդիրը լուծելու և մեր սեփական տարածաշրջանային խոշոր դերակատարումը ցույց տալու համար: Ես համոզված եմ, որ մեր ազգը նման դերակատարություն պետք է ունենա: Իսկ պատճառը նորից ներքին հասարակական, քաղաքական ճգնաժամն է: Դա չի թույլ տալիս մեզ համարժեքորեն և ուժեղ դիրքերից խոսել որպես ռեգիոնալ ուժ: Եվ երրորդ ճգնաժամը, որ այսօր հասել է մեզ և էլ ավելի է խորանալու, դա տնտեսական ճգնաժամն է, որը իհարկե ազդելու է Հայաստանի տնտեսության վրա, որի արդյունքում ունենալու ենք դժվարին օրեր, ամիսներ: Եվ ես պետք է արձանագրեմ, որ նույնիսկ այս պրոցեսը սկսված և խորացող ճգնաժամին մենք նույնպես անհամարժեք պատասխաններ ենք տալիս: Որպես տնտեսագետ ասեմ, որ մենք ունենք բոլոր հիմքերը օգտվելու այս ճգնաժամի դրական կողմերից և ստանանք աճ: Այսօր մենք ունենք երեք մյուզ դոլլարի ճեղքվածք արտահանման և ներմուծման ծավալների համեմատականում, դա աղետային վիճակ է տնտեսության համար: Ես կարծում եմ

ճգնաժամը կնպաստի նրան, որ այդ ճեղքվածքը փոքրանա և դրանով մեր իրավիճակը բարելավվի, բայց մենք պետք է կարողանանք օգտագործել այն բարենպաստ իրավիճակը, որ կհայտնվի երկրում, դա նշանակում է, որ մենք պետք է իրագործենք հակամոնոպոլ ազատ տնտեսական շուկայի քաղաքականությունը, որը այս 17 տարվա ընթացքում ձախողել ենք:

Վ. Օ. Այս ներքաղաքական իրավիճակից որպես էլք դուրս ի՞նչ եք տեսնում:

Ա. Ռ. Ասեմ, որ մի քիչ դժվար է ես ինքս Ազգային ժողովի պատգամավոր եմ, և բոլոր մոդադրանքները ուղղված են Ազգային ժողովին, կառավարությանը և այլն: Մենք ասում ենք ինչու՞ է այդպիսի Ազգային ժողով, կոալիցիա և այլն: Միշտ էլ այդպես է լինելու, քանի մենք բոլորս չենք հասկացել որ պետք է ձևավորենք ընտրական համակարգ, որտեղ քվեաթերթիկների թվաքանակը միանշանակ համապատասխանի անձի, կամ կուսակցության ռեյտինգին: Դա տեղի չի ունենում: Կան արատավոր ընտրական հարաբերություններ Հայաստանում: Երբ քաղաքացին այլևս չի կարևորում իր ընտրական ձայնը: Որևէ ժողովրդավարական երկրում դա իր ամենամեծ իրավունքն է: Ինքը այդ իրավունքը պիտի չվաճառի, չզիջի, նա պետք է կառչած մնա այդ իրավունքից: Դա մենք ստեղծել ենք տարիների ընթացքում: Եվ հասել ենք նրան, որ ցանկացած իշխանություն, որ գալիս է իշխանության չպիտի փոխի այդ վիճակը: Հետընտրական հարաբերությունները կօգտագործի որպեսզի ընտրությունները դառնան շատ ավելի վերահսկելի: Երբ ընտրությունները վերահսկելի են դառնում ԱԺ-ն դառնում է

այդպիսին, դրանից բխող ամեն ինչով: Նախագահական ընտրությունները մի քիչ փոխում են ամբողջ բնույթը, որովհետև նախագահական ընտրությունները շատ ավելի քաղաքական են դառնում: Այդտեղ ամեն մեկը փորձում է իր ընտրական իրավունքը իսկապես կարևորել, և այդ պատճառով ասում ենք՝ եկեք անենք որոշ քայլեր, որ այս իրավիճակին նոր շունչ հաղորդենք: Օրինակ համամասնական ընտրակարգ դարձնենք, վերացնենք մեծամասնական ընտրակարգը, որովհետև ծաղկում է թե ընտրակաշառքը, թե ընտրական իրավունքից մարդկանց ստիպողաբար զրկելը, և դրա հետ մեկտեղ մի ընտրող գնում է այդ նույն գումարը վերցնելով քվեարկում է համ թեկնածուին համ էլ կուսակցությանը: Այս բաների մասին անընդհատ խոսում ենք: Խոսում ենք, որ ԱԺ-ն չպետք է դառնա պատասպարան մարդկանց համար, այլ պետք է դառնա օրենսդիր քաղաքական գործունեությամբ զբաղվող մարդկանց տեղ: Բայց դրել ենք անձեռնմխելիության այնպիսի բաներ, որ չի աշխատում: Երբ որ տեղը գալիս է քաղաքական հետապնդումներ առաջացնելու, դա երբեք չի փրկում մարդկանց: Եվ սրանից հետո ասում ենք՝ եկեք անձեռնմխելիությունը սահմանափակենք, հետ կանչելու մեխանիզմներ մշակենք, այսինքն ժողովրդի վերահսկողությունը իրականացնենք, որ ժողովուրդը իրեն տեր զգա:

Վ.Օ. Համաձայն եմ, բայց դա միայն խոսելով չի լինում: Ես քեզ որ հիմա լսում եմ մտածում եմ լավ կիներ, որ Դաշնակցությունը կոալիցիա չմտներ: Ես Դաշնակցության նկատմամբ մեծ համակրանք ունեմ, բայց գտնում եմ, որ դաշնակցությունը պետք է մնար

ընդդիմադիր դաշտում, որովհետև այսօր բացակայում է մեր գաղափարական ընդդիմությունը: Մեր կենտրոնացումը այսօր քաղաքական դաշտի առողջացմանը պիտի գնա: Այն, ինչ դու ասացիր քաղաքական հիմք ունի: Եթե չառողջացնենք մեր քաղաքական դաշտը, որևէ խնդիր չենք կարողանա լուծել: Մենք պետք է թույլ տանք, իշխանությունները պետք է նպաստեն, ոչ թե իրենք նախաձեռնեն այլ ուղղակի չխոչնդոտեն գաղափարական ընդդիմության ձևավորմանը մեր քաղաքական դաշտում:

Ա.Ռ. Ընդդիմության կարգավիճակը Հայաստանում ինչպիսի՞նն է: Ընդդիմությունը սկսում է գործել այն ժամանակ, երբ դառնում է իշխանություն: Ընդդիմադիր ուժերը այսօր Հայաստանում չունեն այդ լծակները, որ հանդիսանան ինքնաթիռի մյուս թևը: Հայաստանի քաղաքական համակարգը կաղում է: Դրա համար ասում ենք՝ ընդդիմության դերը մեծացնենք: Հիմա առաջին քայլերը կատարեցինք, խորհրդարանական ընդդիմության տեղերն ընդլայնենք, որ ունենա օրենքով երաշխավորված լիազորություններ և այլն: Այլ ոչ թե, մենք մտածում ենք, եթե դու իշխանություն չես, ոչինչ այս երկրում փոխել հնարավոր չէ, որովհետև քո գործունեությունը սահմանափակվում է փողոցներում հանրահավաքներով և այլ միջոցներով, բայց դրանք շատ սահմանափակ ձևեր են ընդդիմության համար աշխատելու: Եթե ես լիարժեք դաշտ չունենամ ընթացքում իշխանությունների վրա ազդելու, ես միշտ պիտի մտածեմ քանի իշխանություն չեմ, ոչինչ անել հնարավոր չէ, հետևաբար պիտի ամեն գնով գամ իշխանության, որպեսզի այս երկրում մի բան փոխեմ:

Վ.Օ. Ես կարծում եմ, մեր հասարակության մոտ ընդդիմության ընկալումը սխալ է: Մենք պետք է աշխատենք դրա վրա: Այսօր ընդդիմություն ասելով մեր հասարակությունը հասկանում է ծայրահեղություն: Այսինքն ընդդիմության ղեկավարը նախագահի հետ չպետք է հանդիպի, սովորաբար այդպես է եղել, և մենք նպաստել ենք դրան: Ոչ մի նորմալ ժողովրդավարական պետությունում նման իրավիճակ չկա: Ընդդիմությունը պետք է լինի այն քաղաքական գործոնը, որը իշխանությունների հետ հակասությունների այդ դիալեկտիկական կատեղծի, որպեսզին երկիրը առաջ գնա: Ընդդիմության ղեկավարը պետք է նախագահի մոտ մտնի, ձեռք սեղմի, միասին աշխատեն, բայց միաժամանակ մրցակից լինի, որպեսզի ժողովուրդը դրա մեջ տեսնի նորմալ զարգացման միտում, նաև լուրջ այլընտրանք տեսնի:

Հ.Ի. Եկեք Հայաստան վերադառնանք: Բոլորը մի բան ասացին, որ իշխանությունը պետք է փոխի, ոչ հասարակությունը պետք է փոխի և ամբողջ միջոցները պետք է ուղղված լինեն այդ բանին, որ հասարակությունը կարողանա այս երկրում մի բան փոխել: Եվ նաև դուք մի բան ասացիք: Ես և՛ համաձայն եմ և՛ համաձայն չեմ: Դուք ասացիք, որ անցումային փուլում ենք գտնվում և այլն: Ինձ թվում է, անցումային այս հասկացողությունը Հայաստանում օգտագործվում է, որպես արդարացում և արդեն դարձել է կարգավիճակ: ՀՀԿ-ից մի բարձրաստիճան ներկայացուցիչ ասաց՝ մենք փորձում ենք անել այն, ինչ ԵՄ-ն ասում է: Երբ իրեն հարցնում են՝ ինչքա՞ն, նա ասում է՝ հինգ տարի և խոսում է ԵՄ մոնիթորինգի հանձնաժողովից: Ինչ է ասում ԵՄ-ն: Ձեզ մոտ խոսքի

ազատություն գոյություն չունի: Մի ազատ գործող հեռուստաընկերություն չկա: Այստեղ ես տեսնում եմ լրագրողները փորձում են ինչ-որ մի բան անել այլ ալիքներում, բայց Ա1+-ը դարձել է արդեն սիմվոլ: Խոսքը զուտ Ա1+ հասկացողության մասին չէ: Արդեն Եվրոպական դատարանն էլ է ասում, որ Ա1+-ը պետք է բացվի: Ընդամենը սա է ասվում այս չորս պահանջների առաջարկությունների մեջ: Հիմա ես մի ժամկետ եմ ասելու, դուք կարող է ժպտաք, բայց չորսից երեքը իրականացնելու համար, անհրաժեշտ է ընդամենը երեք օր: Ա1+-ը բացելը, այստեղ տեխնիկական խնդիր կա, մի քիչ ավելի երկար ժամանակ է պահանջում՝ կարծում եմ 10 օր: Ահա ասում են, որ մարտի մեկի իրադարձությունները բացահայտված չեն: Բացահայտե՛ք: Ինը ամսից ավելի է անցել, բոլորս գիտենք, նույնիսկ այն մարդիկ, ովքեր խոսում են այլ ձևով՝ օգտագործելով քաղաքական դեմագոգիա, բայց բոլորս էլ գիտենք, ինչ կատարվեց. խաղաղ ցույցի հանդեպ օգտագործել են ուժ, զենք, տասը հոգու սպանել են, գնդակահարել են, և այսօր երկու խնդիր կա այստեղ: Ես չեմ ասում միայն քաղբանտարկյալների մասին: Մարդիկ մեղադրանքներով նստած են, ընդ որում այն մարդիկ, որոնք ձերբակալված էին փետրվարի 26-ին, հիմա նստած են այն բանի համար, որ նրանք տասը հոգի մարդ են սպանել: Կա իրենց մեղադրանքի մեջ: Եվ այստեղ պետք չի ասել, որ Ադրբեջանում ավելի վատ է իրավիճակը, կրկնակի ստանդարտներ և այլն: Հայաստանի նման իրավիճակ ԵՄ 47 երկրներից որևէ մեկում չկա: Չկա որևէ տեղ, որ դիպուկահարը մարդ է սպանել: Եվ, ո՞րն է ամենավտանգավորը, որ այս մարդիկ մարդասպաններ՝ համագգեստով, ազատության մեջ են, և հիմա նրանք

վերահսկում են հասարակական կարգը և նրանք օրենք են ներկայացնում:

Ես ուզում եմ ԵՄ այս չորս պահանջներին առանձին անդրադառնալ: Առաջինը՝ մարտի մեկն է: Ես գտնում եմ, որ բոլորը գիտեն ինչի մասին է խոսքը՝ մարդիկ նստած են ոչ մի բանի համար և մարդասպանները դրսում են, կազմակերպիչը դրսում է: Այստեղ անհրաժեշտ է երեք օր, եթե մենք ունենք խորհրդարան և այդ հանձնաժողովը գործում է: Նրանք ասում են՝ քաղաքատարկյալներին ազատ արձակեք, քանի՞ օր է պետք դրա համար: Ես այստեղ գտնվում եմ արդեն երկու շաբաթ, ես կարդացել եմ այդ բոլոր գործերը, և այստեղ կան մարդիկ, որոնք դրանք կարդացել են: ԵՄ-ում սկսել են թարգմանել և կարդալ: Դա սարսափելի է: Այն քննիչները, որոնք ստիպել են մարդկանց դա գրել, պետք է գործից հեռացվեն: Երրորդը՝ ասում են, որ ձեզ մոտ հանրահավաքների հետ կապված խնդիր կա և օրենսդրական և դե ֆակտո այդպես է: 15 բռպե մարտի 17-ին պահանջվեց, որպեսզի հին օրենքը, որը անցել էր այս կամ այն պրոցեսները, որը գործում էր, ի վերջո, 15 բռպե պահանջվեց այդ օրենքը վատը դարձնելու համար, իսկ հիմա հինգ տարի է պետք, որ մենք օրենք ստեղծենք: Եվ նույնիսկ այս օրենքով ընդդիմությունը 65 անգամ դիմել է և մեկ անգամ է ստացել թույլտվություն, որը թերի էր: Եվ չորրորդը՝ Ա1+-ը: ԵՄ-ն ասում է՝ արեք սա: Մնացածը՝ 1609-ում յոթ առաջարկ կա, իսկ 1532-ում՝ 17, բայց խոսում ենք այդ չորսի մասին: Եվ մի ասեք, որ միչև հունվար դա հնարավոր չէ անել: ԵՄ-ն առաջինը նայելու է քաղաքական կամքին, այլ ոչ թե իմիտացիային: Մեզ թվում է, որ մենք խորամանկ ազգ ենք, բայց

դա բիզնես չէ: Մենք գնում ենք Եվրոպա և ինը ամիս նույն բանն ենք ասում:

Վ.Օ. Ես կարծում եմ, այդ որոշումը և այդ բանաձևի տեքստի առկայությունը բոլորին սթափեցրեց: Ես համոզված եմ, որ լուրջ քննարկումներ են գնում այդ կապակցությամբ: Ես էլ, իսկապես, հույս եմ հայտնում, որովհետև որպես ՀՀ քաղաքացի ինձ համար շատ ցավալի է լինելու, եթե հունվարին այդ որոշումը կայացվի: Ես կարծում եմ, որ դա մեր հեղինակության համար շատ մեծ հարված է լինելու: Այնպես որ, սա բոլորիս մտահոգող խնդիր է, բոլոր քաղաքական ուժերը այս խնդիրը ՀՀ նախագահի առաջ պետք է դնեն, որովհետև սա արդեն հայության խնդիր է: Սա նաև սփյուռքահայությանն է մտահոգում, և գիտեմ, որ նրանց կողմից սա շատ բացասական է ընկալվելու, եթե Հայաստանի հեղինակությունը տուժի:

Ա.Ռ. Նախ մի քանի պարզաբանում. ես չեմ ուզում որ մենք վերածվենք դատավարության մասնակիցների: Խոսե՛նք ԵՄ դրած չափորոշիչներով և ես կարծում եմ դա է ճիշտը, որովհետև սա ամենաանկողմնակալ փաստաթուղթն է, իրենք մի տեսակետ կարող են ներկայացնել, մենք՝ մի այլ: Հարցը նրանում է, որ ԵՄ փաստաթղթում որևէ տեղ չի ասվում, որ եղել են խաղաղ միջոցառումներ, հանրահավաքներ և ցրվել են: Ասվում է, որ կա տարանջատման հարց, ովքեր, որ բռնություն չեն գործադրել, չեն կազմակերպել, հրահանգել, օժանդակել, այսինքն իրենք անձամբ չեն արել: Այո այդպիսիները կան, բայց դուք դա տարանջատեք: Սա է խնդիրը, այդ բանաձևերի էությունը: Այստեղ ես իսկապես հարցը տեսնում եմ, այո՛ այդ

անջատումը պետք է կարողանալ կատարել: Այդ տարանջատումը պահանջում է թե՛ դատախիբավական համակարգի մեջ լուրջ փոփոխություններ, օրենքի հետ կապված փոփոխություններ, հենց իրենք էլ մատնանշում են որ այդ խնդիրները կան, այսինքն եկեք վերացնենք այն խնդիրները որոնք առաջացել են ժամանակի ընթացքում, հանենք դրանց արմատները, որ նոր հույս ունենանք որ նոր կյանք ենք սկսում:

Վ.Օ. Մենք նորից գնում ենք սև ու սպիտակի քննարկման: Խոսքը մեր մասին չէ՝ ընդհանրապես քաղաքական ուժերի: Այնքան ժամանակ, որ ընդդիմությունը չկարողանա իշխանության տեսանկյունից հարցը դիտարկել, և իշխանությունները՝ ընդդիմության, ես կարծում եմ, որ ընդհանուր եզրեր չեն լինի և դրա պատճառը քաղաքականության այսօրվա անառողջ մթնոլորտն է:

Մամուլը մեծ դեր ունի: Առանց բաց, օբյեկտիվ մամուլի մենք չենք կարող խնդիրներ լուծել: Ա1+-ը ցավոտ խնդիր է, բայց միայն Ա1+-ով չպայմանավորենք մեր լրատվական դաշտի նորմալացումը և օբյեկտիվությունը: Ես կարծում եմ, որ այդ մի քանի օրվա ոճով կարելի է մի քանի կոնկրետ քայլեր անել՝ իրավիճակը կտրուկ փոխելով: Ուղղակի պետք է հստակ ասվի, որ օգտագործեք ձեր առողջ դատողությունը լրատվական խնդիրների շուրջ որոշումներ կայացնելուց, և թողել, որ մեր հեռուստաընկերությունները գործեն ըստ հասարակական պահանջի: Իմ նախարար եղած ժամանակ սա ցավոտ խնդիր էր, Քոչարյանի ժամանակ վատ էր վիճակը, այսօր էլ է վատ, ոմանք ասում են՝ ավելի է վատացել, ոմանք ասում են՝ ոչ լավացել է՝ երբ հեռուստացույցը միացնում

ես, ընդդիմությունից մեկը խոսում է: Թյուրիմացությունը այստեղ է, որոշել թե, ո՞ր օրը ընդդիմության ո՞ր ներկայացուցիչը պետք է հեռուստաընկերությունում հայտնվի: Դա, ես կարծում եմ, որ մեզ սխալ ճանապարհով է տանում: Ընդդիմության ներկայացուցչի հայտնվելը էկրանին պետք է լինի օրվա իրադարձությունների արդյունք և օրվա հրամայականի պահանջ: Եթե մենք չկարողացանք թույլ տալ, մենք չենք կարողանալու առողջ քննարկում անցկացնել մեր հասարակության մակարդակով: Թերթերը նույնպես աչքին թոզ փչել է, նայեք ինչեր են գրում նախագահին են հայհոյում, ո՞ր երկրում է սա թույլատրված, բայց այդ թերթերը կարողում են մի քանի հազար մարդ: Մեր հասարակությունը այսօր հաղորդակցվում է իրադարձությունների հետ հեռուստատեսության միջոցով: Եթե մենք հեռուստատեսությունը չբացեցինք և առողջ կերպով չբացեցինք, օրինակ նախագահը պետք է կանչի բոլորին և նրանց հետ շատ անկեղծ գրույց ունենա, որ ես բացում եմ ամեն ինչ, դուք ազատ եք, մասնավոր հեռուստատեսություններ եք, բայց եղեք արդար ձեր որոշումների մեջ ճիշտ օգտագործեք ձեր դատողությունը: Ես կարծում եմ որ սա է ճանապարհը:

Ա.Դ. Երևի թե հույս չդնենք, որ նման հանդիպում տեղի կունենա: Վրաստանում ուղղակի նախագահի որոշմամբ հեռուստաընկերություններից մեկը հանձնվեց ընդդիմությանը: Ես կարծում եմ, որ հավասարությունը դաշտում և ընդհանրապես հավասարակշռությունը կվերականգնվի միայն այդ քայլը կատարելուց հետո: Իսկ հիմա այդ հեռուստաընկերությունները այնքան, կոպիտ ասած, ցուցումներ են ստացել, որ հիմա էլ այդ ցուցումը ստանան, կարող է

զարմանան, վախենան ինչ-որ բան անել: Եկեք լինենք ավելի ռեալիստ և սթափ: Հեռուստատեսությունը պետք է բացել, Ա1+-ը պետք է վերականգնել: Սա օրվա հրամայական է, օրվա պահանջ: Լրատվական դաշտը կառողջանա միայն այն դեպքում, երբ տնտեսականը առողջանա, որովհետև եթե դա բիզնես է, ապա դա տնտեսական բիզնես է, հետևաբար այն չպիտի լինի վտանգավոր: Այսօր դա որպես տնտեսական բիզնես վտանգավոր է, եթե ինչ-որ մի տանիքի տակ չէ: Այդ տանիքը կամ կառավարական պետական է, կամ զուտ նեղ կուսակցական, կամ էլ խուլիզանական է: Այլ տանիք այսօր գոյություն չունի: Չկա սթափ, ռեալիստական լուրջ լրագրություն Հայաստանում և սա ազգային մեծ պրոբլեմ է, որին պետք է անդրադառնալ, բայց նորից եմ կրկնում` սա առանց տնտեսական դաշտը մաքրելու, առանց հստակ մրցակցային դաշտ ստեղծելու հնարավոր չէ, որովհետև լրատվության մեջ, որպես բիզնես որևէ մեկը ռիսկ չի անի մտնել ճիշտ այնպես, ինչպես ուրիշ տեղեր ռիսկ չեն անում մտնել ուրիշ ասպարեզներում շատ ուրիշ բիզնեսմեններ: Դրա համար մենք կոչ պետք է անենք նախագահին մեկ հեռուստաալիք տալ ընդդիմությանը և դրանով վերջացնել, հավասարակշռել դաշտը:

Վ.Օ. Ես ավելի կողմնակից եմ մյուս մոտեցմանը. յուրաքանչյուր հեռուստաընկերություն պետք է իր ազատությունը ունենա: Ես կլինդրեի տնտեսությանն անդրադառնալ: Ակնհայտ է, որ մեր տնտեսությունը, չասեմ ճգնաժամի եզրին, սուր գնահատականներ չտամ, բայց որ անկում կա, դա միանշանակ է` դատելով մեր պաշտոնական վիճակագրությունից,

հոկտեմբերը նոյեմբերի նկատմամբ, նախորդ տարվա` հոկտեմբերի, անկում կա: տնտեսական աճի դեֆիցիտն է մեծանում, արտահանումն է կտրուկ նվազել: Միանշանակ մենք լուրջ խնդրի առաջ ենք կանգնելու 2009 թ.: Եթե դու վարչապետ լինեիր այսօր ինչպիսի քայլեր կնախաձեռնեիր իրավիճակը մեղմելու համար:

Ա.Դ. Տնտեսությունը բացարձակ հիվանդ է, չէի ասի անհուսալի, որովհետև սա մեծ տնտեսություն չէ, կարելի է բուժել վերականգնել, բայց դա պետք է անել շատ ավելի համարձակ, շատ ավելի լուրջ քայլերով քան արվում է այսօր: 17 տարվա ընթացքում մենք ունեցել ենք տարբեր մոդելներ տնտեսական զարգացման, փորձարկել ենք տարբեր ձևեր: Եվ եթե հիշում եք 1991-1996-97թթ. մենք հաղթահարում էինք Սովետական Միության փլուզումը, որպեսզի հասկանանք, թե մենք ինչ դաշտում ենք գործելու: Դուք կհիշեք իրանական ապրանքների բազմաձևավալ հոսքը Հայաստան, շատ ցածր որակի և մեր փորձերը դա փոխարինել հայկական ապրանքով: Այդ իմպորտի փոխարկման քաղաքականությունը, կարծես թե, ինչ-որ հաջողություններ տվեց նախագահ Քոչարյանի առաջին մի քանի տարվա նախագահության ժամանակ: Համենայն դեպս ես փաստել եմ, որ 1999 թ. այդ քաղաքականությունը տվեց արդյունքներ` աճեց ներքին արտադրությունը, աճեց ներքին սպառման համար արտադրանքի ծավալը և կարծես թե մենք պետք է պատրաստվեինք հաջորդ քայլին: Ներքին ծավալից անցնեինք արտաքին ծավալի, այսինքն բարձրացնեինք որակը, փորձեինք մեր ներքին արտադրողին տալ այն հնարավորությունները, որպեսզի նա

կարողանա ներքին շուկայից դուրս գալ արտաքին շուկա: Եվ, ի դեպ, մեր արտաքին քաղաքականության բաղադրիչներից մեկը պետք է դարձնեինք տնտեսական դաշտի ընդլայնումը, այսինքն ստանայինք ավելի լայն տնտեսական շուկաներ: Փորձեինք մեր արտաքին քաղաքականությունում դատեսնել, որպես հիմնախնդիր: Մենք դա չարեցինք, և այսօր ես ցավով պետք է փաստեմ, որ մենք վերադառնալու ենք էժանագին իմպորտի փոխակերպման քաղաքականությանը, այսինքն վերադառնում ենք 1993 թ.: 2009 թ., եթե մենք խելոք գտնվենք, մենք պետք է կարողանանք անել ամեն ինչ, որպեսզի այդ նվազող ներմուծման ծավալները փոխակերպենք մեր ներքին արտադրական ծավալներով, իհարկե ցածր որակի, դրա համար էլ ռեսուրսներ են պետք, տնտեսական, մրցակցային դաշտ է պետք և արտադրություն է պետք այդ դաշտում, ինչն այսօր, ցավոք, չկա: Ես շատ հոռետեսական եմ տրամադրված գալիք տարիների կապակցությամբ և ասեմ որ լավագույն դեպքում մեզ սպասվում է 1993 թ. վիճակը՝ ներքին արտադրանքի մասով, իսկ վատագույն դեպքում մի քիչ ”պինդ կկապենք գոտիները”:

Վ.Օ. Անվտանգության խորհրդի նիստում քննարկվում է այս հարցը: Դաշնակցությունը ներգրավված է, ի՞նչ քայլեր են նախատեսվում:

Ա.Ռ. Քննարկվում է իհարկե, որովհետև իրավիճակը զգալի է դառնում նաև մեզ համար, և վստահաբար երկու հիմնական գործոն արդեն աշխատելու է, որոնց արմատները շատ խորն են: Օրինակ, սփյուռքը երկու անգամ շատ է քան Հայաստանի բնակչությունը: Մեր

հայրենակիցները, որ դուրսն են իրենց վիճակը վատանում է այդ համաշխարհային ճգնաժամի արդյունքում, իսկ այստեղ Հայաստանում բավականին լուրջ քանակությամբ մարդիկ հենց այդ դրսից օգնությունների, ընդհանուր ներդրումների հիմնան վրա են որոշակի առաջընթաց ապահովում: Մա է շատ լուրջ աճ առաջացրել: Երկրորդը, որ արտահանման քաղաքականություն Հայաստանում, ի սկզբանե, լուրջ չի դրվել: Մենք չպետք է ելնենք այն գաղափարից, որ եկեք օր առաջ լուծենք Ղարաբաղի հիմնախնդիրը, սահմանները բացենք և սա է մեր միակ ձևը: Եթե դա է միակ ձևը, նշանակում է մենք հսկայական գին ենք վճարում, որ տնտեսությունը բացվի, շնչի և այլն: Ես համարում եմ, դա մեծ ազգային աղետ է նաև հետագա սերունդների համար: Մեր տնտեսության զարգացումը մենք պետք է դնեինք այն տրամաբանության մեջ, որ ունենալու ենք երկարատև մի հակամարտության վիճակ, երկու կողմից փակ սահմաններ, Ադրբեջան-Հայաստան և Հայաստան-Թուրքիա և եկեք հասկանանք, որ այդ պայմաններում մեր տնտեսությունն ինչ ձևով պետք է զարգացնենք: Չի դրվել այնպիսի հարց, որ մենք պետք է ելնենք մեկուսացված երկրի տնտեսություն ունենալու տրամաբանությունից, բայց դա է իրավիճակը: Մենք քանի տարի է մեկուսացված ենք և ո՞վ է ասում, որ այդ հարցը վաղը լուծվելու է:

Վ.Օ. Այս 17 տարվա ընթացքում մենք, համենայն դեպս, լուրջ աճ ունեցել ենք, այնպես չի որ տնտեսությունը իր հունին է թողնվել: Ես մտածում եմ, որ Քոչարյանի օրոք որոշ քաղաքականություն մշակվել է, կարող է 100% հաջող չի եղել, ճիշտ չի եղել բայց, որ մենք տասը տարի, հատկապես

վերջին յոթ տարին անընդհատ երկնիշ աճ ենք ունեցել: Ես կարծում եմ, որ դա իսկապես ձեռքբերում է: Եվ հիմա ցավոտ խնդիրն այն է, որ մենք սկսել ենք հետ քայլ անել: Ճիշտ է, համաշխարհային տնտեսական ճգնաժամը ազդում է: Եթե տոկոսային հարաբերություն է լինելու միջազգային ճգնաժամի՝ այս մեր քաղաքականությանը, մեր ներքաղաքական դաշտի անառողջ լինելու, մեր սխալ հարկային քաղաքականության և այլն դժվար է ինչ-որ կոնկրետ գնահատական տալ, բայց լավագույն դեպքում 50-50 է, ումանք ասում են 60-70%-ը մեր ներքին խնդիրներն են, միայն 25-30% է դրսի ազդեցությունը: Ես ուզում եմ հավատալ, որ մեզանից իսկապես շատ բան է կախված: Մենք մեր տնտեսության այդ խցանումները, որ ակնհայտ է մեզ համար այս ճգնաժամի պայմաններում, առավել շատ երևացող է, պետք է բացենք: Օրինակ, մրցակցությունը բացենք: Եթե այս խցանումը բացենք տնտեսությունը էապես ավելի բարենպաստ իրավիճակում կհայտնվի:

Ա.Դ. Տնտեսական աճի հետ կապված, ցավոք սրտի այդ աճը կապված չի եղել Հայաստանի ներքին ֆակտորներից, ունեցել ենք միայն արտաքին ֆակտորից կախում, որը ավելացել է այս տարիների ընթացքում, որը տեղի է ունեցել տնտեսական համաշխարհային ֆինանսական փուչիկի աճի պատճառով: Աճել է այդ փուչիկը և այն դրվել է մեր տակ՝ դրամային տրանսֆերտների տեսքով: Մենք ստացել ենք 2,5 - 3 մլրդ տրանսֆերտներ գրպանից - գրպան, և ստացել ենք ընդամենը 200-250 մլն դոլարի ներդրում, որը ուղղակի աղետային վիճակ է: Եթե աճը ֆունկցիա լիներ, մեր ներքին զարգացման, դա մենք կընդունեինք

իսկապես աճ: Աճը այն դեպքում է աճ, երբ ազդում է բնակչության զգալի մասի վրա: Այնպես որ, ամենաօպտիմիստական հաշվարկներով 15%-ից ոչ ավելի միջին խավ ունենք: Այսինքն, որն ունի միջին ապրելակերպ և կարողանում է գոյատևել, բայց այդ աճը ավելի շատ է մեծացրել այդ տարբերությունը հարուստների և աղքատների միջև:

Հ.Ի. Այստեղ շատ կարևոր է, որ հերթական անգամ սխալ թույլ չտանք: Հայաստանի ճգնաժամի առանձնահատկությունը հետևյալն է՝ այստեղ նշվեց նաև տրանսֆերտների հարցը, մենք կարող ենք բյուջեից խոսել, և այդ սխալը հիմա անում է կառավարությունը, որը գտնում է, որ ճգնաժամից խուսափելու լավագույն միջոցը բյուջեն պահելն է, անուղղակի ձևով նաև ՀՆԱ-ն: Բայց Հայաստանում դա էական չէ, հատկապես այսօր: Հայաստանում աղքատության տոկոսը տարբեր հաշվարկներով 35-50% է, միջինը 40-45%, դա այն մարդիկ են, որոնք օրական այդ զամբյուղից երկու դոլարից պակաս կարող են ունենալ: Եվ Հայաստանի դեպքում առաջին խոցելի խավը լինելու են հենց այս մարդիկ, այսինքն մենք բյուջեն կավելացնենք ՀՆԱ կավելանա, բայց այս մարդկանց վիճակը կախված չի լինելու բյուջեի 20% աճից: Այսօր ցանկացած քայլ պետք է ուղղված լինի վերապրելու այդ ճգնաժամը, ուղղակի պետք է փորձենք այս մի տարին մի կերպ ապրենք: Եվ նայեք՝ մեր պալատը համատեղ ամերիկյան պալատի հետ միասին արեցինք մի զեկույց, որտեղ ահազանգեցինք, որ Հայաստանի բյուջեն 48,5% համարյա կեսով համալրվում է ոչ ուղղակի հարկերից, այսինքն ավելացված արժեքից: Այսօր համարենք, որ Հայաստանում հարյուր հազար դրամ ստացողների

քանակը բավականին մեծ թիվ է կազմում, և այդ մարդը հարյուրից քսան հազարը տալիս է ԱԱՀ-ի ձևով և ստացվում է որ մենք բյուջեն ավելացնում ենք այս միջին և աղքատ խավի միջոցով: Այստեղ նաև այդ ուղղությամբ պետք է նայենք, պետք է անուղղակի հարկերը իջեցնել, և պետք է փորձել բարձրացնել բարեկեցության հարկը, եթե գտնում ենք, որ սրանով բյուջեն կպակասի: Պետք է հաշվի առնենք, որ դրսից այդ աշխատավարձը, այսինքն հիմնականում ընտանիքի անդամներն են ուղարկում, որոնք աշխատում են Ռուսաստանում, մոտ 48-50%, նաև Եվրոպայից և Ասիայից, Ամերիկայում շատ քիչ, այնտեղից հիմնականում գալիս է օժանդակություն: Բայց, օրինակ, եթե Մոսկվայում շինարարությունը պետք է դադարեցվի 50%-ով, վեց ամսվա ընթացքում և արդեն օրենք կա, որ այդ միգրանտների մասնակցությունը այդ աշխատանքներին պետք է կրճատվի՝ առնվազն 30-40%-ով: Դա նաև անդրադառնալու է մեր քաղաքացիների վրա: Եվ համոզված եղեք, որ տրանսֆերտների մակարդակը իջնելու է 30-40%-ով: Դա նշանակում է, որ մարդկանց վճարունակությունը Հայաստանում ընկնում է, և ռեցեսիան կամ բյուջեի անկումը այդ դեպքում երկրորդական է դառնում: Մենք պետք է նայենք, որ նույնիսկ այն մարդը, որ ապրում է Նոյեմբերյանի կամ Զանգեզուրի հեռավոր գյուղում, բյուջեին հարկ չի տալիս, բայց նաև բյուջեից չի սնվում, մեզ համար սա էլ է պետական խնդիր, այսինքն դեմոգրաֆիայի խնդիրն էլ ենք լուծում, և այստեղ բյուջեն դառնում է երկրորդական: Այստեղ շատ կարևոր է վստահությունը, այսինքն այդ փաթեթը, որ գալիս է պառլամենտ, մենք պետք է իմանանք, որ

այդ փաթեթը ուղղված չէ ինչ-որ մեկի շահերին: Ճիշտն ասած ես չեմ հավատում, որ այսօր չեզոք փաթեթ կգա խորհրդարան: Կարևոր չէ, դա իրական է, թե չէ: Կարևորը՝ հասարակությունը չունի այդ վստահությունը: Ժողովուրդը համոզված է, որ եթե հարկերը այս կամ այն ուղորտում իջան կամ բարձրացվեցին, դա ինչ-որ մեկի շահերի համար է արվում: Այս մթնոլորտը պետք է փոխենք: Պետք է պայմաններ ստեծել նորմալ ընտրությունների և պետք է սկսել խորհրդարանական ընտրություններից:

Վ.Օ. Ես ուզում եմ բացել քննարկումը: Կարող եք շատ կարճ ռեպլիկներ անել կամ հարց տալ մասնակիցներից մեկին:

Վարդան Խաչատրյան (Ժառանգություն կուսակցություն): Ես շատ կարճ կցանկանայի ուղղակի մի բան նշել, որ իմ կարծիքով այստեղ շեշտադրումները որոշակի շեղում ունեն, հիմնականում այն պատճառով, որ երեք հիմնական բաղադրիչների բացակայության պայմաններում, այն ինչից մենք հիմա խոսում ենք, դժվար է իրականացնել: Այսինքն անկախ ֆինանսավորման աղբյուրներ երկրում գոյություն չունեն, անկախ դատական մարմիններ, անկախ լրատվամիջոցներ, խոսքը վերաբերվում է ՁԼՄ-ի էլեկտրոնային դաշտին, գոյություն չունեն: Այս պայմաններում խոսել մնացածի մասին այնքան էլ ճիշտ չէ, և միևնույն ժամանակ ես կցանկանայի նշել, որ պետք է քննարկել մեկ հարց ևս, արդյոք այս ամենի արդյունքում դատարանների կիրառած անձնավորված, կամ ընտրովի քաղաքականության պայմաններում երկրի ներսում միացված չէ ինքնառոչացման մեխանիզմը: Դա կարող է լինել նաև ռեժիմի ինքնառոչացումը, որը կազդի նաև

պետականության վրա: Սա շատ լուրջ խնդիր է, որովհետև այդ դատարանների գործունեությունը ուղղված է ուղղակի պետության դեմ, որովհետև նրանք վերացնում են պետության ինստիտուտը:

Անդրանիկ Թևանյան (վերլուծաբան, փորձագետ): Այդ խնդիրները, որոնց մասին մենք խոսում ենք, երևացող մակերեսային խնդիրներ են: Խոսքը վերաբերում է լրատվամիջոցներին, ընտրական համակարգին և մենք խոսում ենք, որ եկեք բարեփոխենք մեծամասնականը դարձնենք համամասնական: Պրն Օսկանյանը շատ լավ գիտի, որ նույն համամասնական ցուցակներում մարդիկ փող են տալիս, ընդգրկվում են, ոչ մի տարբերություն չկա, բոլոր կուսակցություններն էլ ունեն նման էշերուններ իրենց հետևում, խնդիրը այդ չէ: Նույն Գերագույն խորհրդի ընտրությունները մեծամասնականով է եղել, և ես չեմ կարծում, որ այն ժամանակվա Գերագույն խորհուրդը ավելի վատ կազմ ուներ, քան այսօրվա Ազգային ժողովը: Խնդիրը, ես կարծում եմ, երեք հիմնական ճգնաժամերի մեջ է: Առաջինը՝ համընդհանուր լեզետիմության, վստահության և արդարության ճգնաժամ: Լեզետիմության ճգնաժամը իր խորքում ունի ճգնաժամ սեփականության նկատմամբ: Եկեք չմոռանանք, որ Սովետական միության փլուզումից հետո, երբ սեփականությունը տրանսֆորմացիայի ենթարկվեց, սեփականության կուտակման նախնական փուլում առաջացավ սեփականության խնդիր, սեփականությունը Հայաստանում լեզետիմ չէ: Բոլոր ընտրությունների ենթատեքստերում, հետխորհրդային պետություններում սեփականության վերաբաշխման վտանգը, որը կախված է

բիզնեսի վրա, և այս ընտրություններում էլ դա երևաց, բերում է նրան, որ քաղաքական դաշտում չի լինում անցկացնել նորմալ ընտրություններ, որովհետև իշխանությունը սերտաճած լինելով բիզնեսի հետ, շատ լավ հասկանում է, որ եթե ինքը գնա նորմալ ընտրությունների, ապա կկորցնի իր սեփականությունը, անձի անվտանգությունը և այլն: Այդ առումով, ես կարծում եմ Հայաստանում կարիք կա սեփականության ինստիտուտի հստակ պաշտպանության մեխանիզմ սահմանել, և բիզնեսի համար անցնել պրոգրեսիվ հարկման քաղաքականությանը, որպեսզի փոքրերը, միջինները և խոշորները ազատ տեղաշարժվելու հնարավորություն ստանան: Եթե սեփականության դաշտը պաշտպանված լինի մենք չենք վախենա ունենալ բջիններ, կամ այլ սեփականատերերի հետ կապված այլ խնդիրներ: Դրանից հետո արդեն, քաղաքական վերնաշերտային հարաբերությունները, նորմալ ընթացք կստանան նորմալ ուժեր կձևավորեն: Անցումային փուլը կավարտվի այն ժամանակ, երբ հստակ կայացած աջ ուժը, կապիտալի ուժը կայացած կլինի Հայաստանում: Դրանից հետո, մրցակցային դաշտի պարագայում կձևավորվի նորմալ աշխատուժի շուկա, որը իր հետ կբերի ռեալ գործող արհմիութենական շարժում: Արհմիութենական շարժումները աշխատուժի շուկան կբերեն նորմալ ձախ սոցիալ-դեմոկրատական ուժերի առկայություն, և աջերն ու ձախերը, իրար փոխարինելով, կարելի է ասել, որ անցումային փուլը ավարտված կլինի: Իսկ հիմա մենք այդ շուկայի, կապիտալի

բիզնեսի կայացման մասին պետք է մտածենք:

Լևոն Բարխուդարյան (Ֆինանսների նախկին նախարար, BTA Բանկի խորհրդի անդամ):

Որոշ հարցեր կան, որոնց ես համաձայն չեմ: Վերջին դրույթի հետ կապված որոշ տարաձայնություն ունեմ: Պրոգրեսիվ հարկերի հետ կապված: Մենք այդ փորձն ունեցել ենք և այն ըստ էության դա չի արդարացնում ոչ թե այն պատճառով, որ սպեցիֆիկ բաներ կան, որ հարուստները ավելի շատ հարկեր պետք է տան, գույքային հարկերով դա միջև հիմա արտահայտված է: Հարուստները հավասար հարկերի դրույթաչափի պայմաններում, միշտ էլ ավելի շատ են տալիս, որովհետև շատ եկամուտ են ստանում: Հարցը նրանում է, որ բոլոր հարուստները հարկման դաշտ մտնեն, իսկ որ պրոգրեսիվ հարկում է, նշանակում է հարուստներ ուղղակի պետք է չլինեն: Բառացիորեն մի քանի օր առաջ Լատվիան, որպես ԵՄ երկիր ստացավ ավելի քան վեց մլրդ դոլար` դիմակայելու համար ճգնաժամին, և բոլորս կարծես թե համակերպվել ենք, Հայաստանը պետք է լինի միշտ շրջափակման մեջ, այսինքն շրջափակման մեջ եղած երկիրը այդ օգնությունը չի ստանում:

Վ.Օ. Այդ կանխիկ գումարը մեր խնդիրները այսօր կլուծի:

Լ.Բ. Դա հիմնական գործոններից մեկն է այսօր մեղմելու այս ճգնաժամի վիճակը: Ես չեմ անդրադառնում այլ գործոններին, որոնք շատ հարատև կայուն գործոններ են` մրցակցային դաշտի ձևավորումն է, արտահանման խթանումն է, բացառություններ անելն է, հարկային դաշտի հավասարաչափ կիրառումն է, ի դեպ համաձայն չեմ զեկույցի որոշ

կետերին, որտեղ ասվում է, որ հարկային վարչարարության ուժեղացումը բերում է կապիտալի արտահոսքի: Ո՛չ, անհամաչափ ուժեղացումն է բերում կապիտալի արտահոսքի: Մա կոնկրետ գործնական հարց է: Որոշ երկրներ, չասեմ սանկցիա են կիրառում, նույն հազարամյակի մարտահրավեր ծրագիրը, որ էպպես փոքրացավ, նաև ԵՄ որոշումից հետո, ստացվեց որ ժողովուրդն է տուժում: Այս փողը պետք է գնար գյուղական ճանապարհների շինարարությանը, ջրագծերի կառուցմանը և այլն: Ստացվում է, որ պատժում են իշխանություններին, տուժում է ժողովուրդը:

Վ.Օ. Մենք նաև առաջարկություն ենք արել անտեղ, որ Հայաստանը պետք է պահանջի դոնորների կոնֆերանս, ես կարող եմ դա կարևորել: Բայց մի սխալ կարծում եմ պետք է խուսափենք անելուց` այս ճգնաժամի լուծումը չտեսնենք ժամանակավոր մեթոդների մեջ: Ես կարծում եմ, որ այդ փողը շատ ժամանակավոր խնդիրներ է լուծելու: Ես զարմացած եմ, որ մեր 2009 թ. բյուջեն կառուցված է 9,5% աճի կանխատեսման վրա: Թե ինչպես է լինելու, ինչպես են ուղղելու, ինձ համար դա անորոշ է: Բայց դա մի քիչ զարմանալի է: Լավագույն կանխատեսումները տալիս են 5% աճ, հոռետեսականները տալիս են -2%: Իհարկե մենք կանխիկի հետևից ենք ընկնում, կարծում եմ, որ Ռուսաստանը հավանական տրամադրողներից մեկն է, իսկ դա ես կարծում եմ, որ կլուծի միայն մեր բյուջետային խնդիրները: Ես ուզում եմ, որ այս ճգնաժամից մենք լավագույս օգտվենք նրանով, որ կարողանանք այդ խորքային, երկրորդ սերնդի բարեփոխումների մեջ իսկապես մտնել: Եվ փորձենք դա արագ անել, որպես այս

ճգնաժամից դուրս գալու ճանապարհ, այդ փողը պետք է, և հուսով եմ Ռուսաստանը, Արժույթի միջազային հիմնադրամը, Համաշխարհային բանկը կտրամադրեն, բայց, որ մենք միայն դրա վրա կենտրոնանք, ժամանակավոր լուծումներ տանք, կարծում եմ, որ դա սխալ է:

Հարություն Խաչատրյան (Նոյան տապան):

Ես կուզենայի կարճ անդրադառնալ երկու խնդիրների: Առաջինը քաղաքական և ինստիտուցիոնալ ճգնաժամին է վերաբերում և մյուսը՝ ընտրությունների անցկացման խնդրին: Խոսելով ակնհայտ քաղաքական և ինստիտուցիոնալ ճգնաժամի մասին, որի մասին ասված է նաև զեկույցում մենք խուսափում ենք նշել, թե ով է դրա համար պատասխանատու կամ այն քաղաքական ուժը, որը դրա համար պատասխանատու է, ես ի նկատի ունեմ ՀՀԿ-ն, որը վերջին տասը տարում եղել է իշխող քաղաքական ուժ, կառավարող կուսակցություն, և այս տասնամյակի վերջում ունեցանք այս ճգնաժամը, մարտի մակ և այլն: Եվ բանը միայն այդ պատասխանատվության պատմական ասպեկտը չէ, հարցը նրանում է, որ այդ իրավիճակը շարունակվում է նաև այսօր: ՀՀԿ-ն այսօր էլ կուսակցություն չէ: Եղավ մարտի մեկը, թվում էր թե նորմալ քաղաքական կուսակցությունները պետք է կազմակերպեին արտահերթ համագումարներ, հայտարարություններ անեին, ինչ-որ ձևով իրենց վերաբերմունքն արտահայտեին: Շատ կուսակցություններ դա արեցին, բայց ոչ ՀՀԿ-ն: Այնպես որ, մենք հիմա ունենք քաղաքական կուսակցություններ և ունենք ՀՀԿ, որը փչացնում է ամբողջ քաղաքական դաշտը, չլինելով քաղաքական կուսակցություն: Եվ երկրորդ՝ ընտրությունների հանգամանքը: Ամենացավոտը այն է, որ մեզ մոտ

ընտրությունները կեղծվել և շարունակում են կեղծվել: Մինչդեռ հնարավոր է ստեղծել այնպիսի քվեարկության համակարգ, որը հնարավոր չլինի կեղծել: Դա զուտ տեխնիկական խնդիր է: Այդ կոմպյուտերացված սխտեմ մտցնելու առաջարկությունը ես ներկայացրել եմ ԱԺ, որը արդեն կես տարի է չի արձագանքում:

Ռուբեն Հակոբյան (Ակունք վերլուծական կենտրոն):

Ես ուզում եմ երեք հաստատում անել, որոնք կային հոետորների խոսքում, որ իսկապես ճգնաժամը ավելի խորացավ մարտի մեկից հետո, որ ոչ մի եվրոպական երկրում այսպիսի իրավիճակ չի, և որ շատ գայթակղիչ մեխանիզմ առաջարկվեց նախորդ իշխանությունների կողմից՝ ընտրությունները վարկաբեկելու, և այս իշխանություններն էլ օգտվում են դրանից: Բայց ի՞նչն է ինձ մտահոգում: Ասում ենք, որ կշարունակվի ճգնաժամը: Միակ մեխանիզմը, որ քաղաքակիրթ աշխարհը ստեղծել է՝ ընտրությունները, ասում եք, որ հասարակությունը դրան պատրաստ չի: Սա ոչ միայն քաղաքական առումով, այլ ընդհանրապես վիրավորական է աղպես ասել, որովհետև հասարակությունը պատրաստ է, հասարակության մի հատված, որը դարձել է իշխանություն տարբեր ժամանակներում՝ պատրաստ չի: Եվ պետք չէ դա վերագրել հասարակությանը, որովհետև երբ 1992 թ. տոտալիտար համակարգում ընտրություն անցկացվեց և ժողովուրդը փառահեղ ձևով այդ ընտրության իրավունքը իրացրեց, դա տեսած մարդը չի կարող այդ գնահատականների հետ համաձայնվել: Ի վերջո պետք է կարողանանք համարժեք առաջարկություն անել, թե ինչպես դուրս գալ սրանից: Ես վստահ եմ, որ եթե այս քննարկումը լինի մարտին, կոնկրետ առաջարկություն կլինի, որովհետև

ժամանակը պարտադրելու է, որ մենք կոնկրետ քայլերի գնանք: Ես գտնում եմ, որ Օսկանյանը մի քիչ լավատես է, ես կարծում եմ, որ մեր շատ խորը ճգնաժամին գումարվել է փոքր ճգնաժամ: Եվ այս պահին Հայաստանի ճակատագիրը իսկապես լուծվում է Հայաստանում, և եթե համամասնորեն բաժանենք, թե ո՞ր տոկոսն է ավելի խորը ազդում, մոտավորապես 80-90%-ը մեր ներքաղաքական ճգնաժամն է: Մեր պետության տնտեսական բնույթը, կառուցվածքը այնպիսին է, որ այս գլոբալ ճգնաժամը կարող է ավելի շատ դրական ազդեցություն ունենալ, քան բացասական:

Ավետիք Իշխանյան (Հայաստանի Հելսինկյան կոմիտե): Ընտրությունների հետ կապված ես ավելի հոռետեսական եմ տրամադրված: Եթե մենք վերցնենք մեր ամբողջ ընտրական պատմությունը, մենք դեռևս արդար ընտրություն չենք ունեցել, ինչպես նաև 1990 թ. ընտրությունները, որոնք լեգիտիմ էին, բայց ինչպիսի՞ ընտրություններ էին անցկացվում մարզերում. ինչքան հնարավոր էր կոմունիստներն էին կեղծում, Երևանում՝ ՀՀԾ-ն: Բայց այդ ընտրությունները լեգիտիմ էին, և մենք հաճույքով հիշում ենք դրանք: Լեգիտիմությունն ու օրինականությունը տարբեր հասկացողություններ են: Այսօրվա համարյա բոլոր կուսակցությունները այս կամ այն չափով մասնակից են եղել այդ կեղծիքներին: Միչև ընտրությունների հասնելը պետք է այլ հարցեր լուծել, դատեղական ինքնակառավարման անկախությունն է, դատական իշխանության անկախությունն է, դրանից հետո կարող ենք խոսել ընտրությունների մասին:

Խոսքով Հարությունյան (ՀՀ նախկին վարչապետ): Ըստ ինձ, իրոք մենք ապրում ենք ճգնաժամ, բայց դա սարսափելի չէ: Ճգնաժամը լավ հնարավորություն է սեփական հանրային օրգանիզմը առողջացնելու: Արդյո՞ք մենք ունենք ռեսուրս դրա համար: Այո, ունենք: Ճանապարհը կայանում է հետևյալում, նախ պետք է լինի երկխոսություն, այն ինչ-որ այսօր բացառված է, գոյություն չունի, իշխանությունը չի ուզում ճանաչել, ընդհունել ընդդիմության հարցադրումները, ընդդիմությունը ընդհանրապես չի ուզում ճանաչել իշխանությանը: Ընդ որում, երկխոսության կողմերը անպայման չէ, որ լինեն միայն իշխանությունն ու արմատական ընդդիմությունը, երկխոսության ֆորմատը կարող է ընդլայնվել: Այն առարկայական կլինի, եթե մշակվի քաղաքական օրակարգը՝ որ խնդիրների շուրջ մենք պետք է բանակցենք: Այդ խնդիրները պետք է պատասխանեն մեկ հարցի՝ հանրության ապագայի նկատմամբ պատկերացումների և դրանցից բխող խնդիրների վերաբերյալ: Դրանք պարտադիր չէ, որ լինեն տնտեսական ճգնաժամի բոլոր ծալքերը, խոսքը ինստիտուցիոնալ կայացման մասին, է այն հարցադրումների մասին, որոնք ակնհայտորեն կարող են հանրությանը տարբեր ուժերի մասնակցությամբ, տանել առաջ: Նման խորհրդակցությունների նպատակը կլինի՝ ձևավորել այն քաղաքական նպատակը, որը լուծում է պահանջում և այն կանգնած է ընտրության առջև, թե՛ ի դեմս ընդդիմության, և թե՛ իշխանության, կամ այլ քաղաքական ուժերի: Մեր իրականության մեջ քանի դեռ ԱԺ-ն չի վերածվել իրական քաղաքական մարմնի, ամբիոնի մենք միշտ ունենալու ենք այս

խնդիրը: ԱԺ ինստիտուցիոնալ կայացման մասին պետք է լուրջ մտահոգվել: Արտահերթ ընտրություններին ոչ թե մենք պատրաստ չենք, այլ պատրաստ չի ինքը՝ քաղաքական համակարգը: Եվ, եթե մենք նախորոք մշակված, քաղաքական բանակցությունների ճանապարհով չգնանք, որևէ ընտրություն, որևէ արդյունքի չի բերելու: Մենք պետք է կարևորենք ԱԺ բացառիկ պատասխանատու դերակատարումը պետական կառավարման ողջ համակարգում: Միայն այն ժամանակ, երբ մենք համոզվենք, որ ԱԺ-ն դառնում է քաղաքական ուժերի արտացոլման պատկերը, այդ ժամանակ կկարողանանք քայլ - քայլ գնալ առաջ: Տնտեսական ճգնաժամը մեզ հնարավորություն է տալիս լուծել, ոչ միայն ժամանակավոր խնդիրներ, այլ անդրադառնալ մեր տնտեսության կառուցվածքին: Այսօրվա կառուցվածքը ունակ չէ այսպիսի մարտահրավերներին դիմակայելուն:

Դավիթ Հարությունյան (ԵՆԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար): Այստեղ հնչեցվում են խնդիրներ, սակայն լուծումները չեն տրվում: Չունենք անկախ դատական համակարգ, խոսքի ազատությունը սահմանափակված է ԱԺ-ն չի արտահայտում հասարակական կարծիքը և այլն: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ մենք գանք իշխանության՝ լուծումները հարյուր տոկոսով տրված կլինեն: Դա այդպես չէ, և պատմությունը դա ապացուցել է: Մենք պետք է մտածենք երկու տարբեր խնդիրների լուծումների մասին՝ կարճաժամկետ ծրագրեր, որոնք կապված են քաղաքական կամքի հետ, լինում է քաղաքական կամք՝ երկիրը կտրուկ առաջ քայլ կատարում է: Ինչ պետք

է անենք որ այն լինի հարատև: Կուրգենայի մեկ հարցադրում անել որը պետք է երկարաժամկետ ծրագրերի մեջ մտնի: Բանն այն է, որ մեր քաղաքական կուսակցությունները ընդամենը մեկ շանս են ստանում ստանձնելու երկրի համար պատասխանատվություն՝ դա ԱԺ ընտրություններն են: Ընտրությունից - ընտրություն մեր քաղաքական դաշտը կարծես մահանում է: Կա բաժանում՝ իշխանություն-ընդդիմություն և վերջ: Քաղաքական կուսակցություններին պետք է հնարավորություն տանք ավելի ստորին մակարդակով ստանձնել պատասխանատվությունը, այսինքն ունենանք քաղաքականացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որով մենք հնարավորություն կտանք ստանձնելու պատասխանատվություն ավելի ստորին մակարդակում, ապացուցելու իրենց պատրաստակամությունը լուծելու լուրջ խնդիրներ և հետագայում երկրի ճակատագրին ավելի ակտիվ մասնակցելու: Մրա համար պետք է կատարենք մի շարք քայլեր, ոչ միայն քաղաքականացնենք, այլև տեղական կառավարման ընտրությունները լինեն մեկ օրվա ընթացքում, այլ ոչ թե տարվա ընթացքում, ինչի հաշվին կորում է քաղաքականացվածությունը:

Գուրգեն Խաժակյան (լրագրող): Հիմնախնդիրը՝ ընտրական համակարգն է: Պարոն Հակոբյանի հետ համաձայն եմ, բայց այստեղ հարց է ծագում այդ ընտրությունների էլեկտրատից այսօր հանրապետությունում քանի տոկոսն է ներկա: Որ դուրս ենք գալիս փողոց նու՞յն դեմքերն են, որ 1988 թ. Ազատության հրապարակում էին: Այդ առումով տեղի է

ունեցել հասարակության
լյումպենիզացիա:

Վլադիմիր Կարապետյան (Հայ ազգային կոնգրեսի արտաքին հարաբերությունների պատասխանատու): Ես ուզում եմ խոսել ճշմարտության ճգնաժամի մասին, մասնավորապես այն սպանող, որ իշխանությունները գործեցին մարտի մեկին և դրանում մեղավոր ճանաչեցին հարյուրավոր ընդդիմադիրների, նետեցին բանտերը և շարունակում են պահել: Այստեղ ներկաներից շատերը բազմիցս ասում էին, որ պետք է ազատել քաղաքական կալանավորներին, բայց կան մարդիկ, որոնք գնում էին Եվրոպական կառույցներ և անում էին ամեն ինչ, որ այդ մարդիկ շարունակեն զրկանքներ կրել: Նրանք այնպիսի ուղղումներ էին ներկայացնում ԵՄԽՎ 1620 բանաձևում, որ այդ մարդիկ շարունակեն մնալ բանտերում: Այստեղ ասացին, որ ընդդիմությունը պատրաստ չէ երկխոսության, դա այդպես չէ, բայց պետք է այդ մարդկանց ազատել: Եվ վերջին՝ ը մեր գլխին այդ սպառնալիքը կա մոնիթորինգի հանձնաժողովի կողմից նախանշած: Դա է Հայաստանի խնդիրը, ինչու՞ ենք մենք լոգոում դա ուրիշ խնդիրներով, թողնելով այն, որ Հայաստանը քաղբանտարկյալներ չպետք է ունենա:

Լյուդմիլա Հարությունյան (սոցիոլոգ): Արդյոք հայ հասարակությունը տեղյակ է, թե ինչ է տեղի ունենում այսօր: Եթե սկսենք 88 թ., ապա մինչև 94 թ. մենք միասին ազգային ազատագրական պայքարի հարցն էինք լուծում: 1994 թ. սկսվեց աղքատների և հարուստների դասերի ձևավորման գործընթացը, իշխանությունը վերցվեց ամբողջ ինստիտուցիոնալ

կառույցով, և գնում է իշխանության պաշտպանության ընթացքը, վերցվեցին դատարանները, տեղական իշխանությունը, ԱԺ, և այդ ամենը ծառայում է սեփականության պաշտպանությանը: Հասարակությունը Հայաստանում պարտվեց բոլոր ընտրություններում, որովհետև այն չէր հասկանում, որ իշխանություն-հասարակություն պայքար էր գնում: Այսօր հասարակությունն է, որ պահանջում է փոփոխություն, սա ուրախալի է, եթե չլիներ ԵՄ-ի այս վարվելակերպը: Իշխանությանն են ուզում պատժել՝ հասարակ ժողովուրդն է տուժում: Բայց ուժեղները միշտ էլ այդպես են անում, ժողովուրդը պետք է տուժի, որ ընդվզի սեփական իշխանության դեմ: Սա է մեխանիզմը: ԵՄ-ն չի կարող ուղղիլ փոխել իշխանությունը: Պարզվում է, որ դա մեզ մոտ հնարավոր չէ, որովհետև ժողովուրդը որևէ կապ չունի իշխանության վերարտադրության հետ: Այսինքն մենք ճգնաժամի մեջ չենք, մենք փակուղու մեջ ենք, քաղաքական համակարգը, հասարակությունը փակուղու մեջ է: Այստեղից է գալիս ընդդիմադիր ուժերի ռադիկալությունը: Բոլոր այն ուժերը, որոնք փորձում են խաղալ արանքում՝ ծառայում են իշխանության վերարտադրությանը: Երբորդ ուժ գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ: Եթե ընդդիմությունը զիջի այսօր, իսկ այն շատ է զիջել, դա կլինի հասարակության վերջնական պարտությունը: Եվրոպան ասում է՝ չեք ուզում իմ արժեքները կիսեք, մի՛ կիսեք: Կարո՞ղ է արդյոք զիջել իշխանությունը: Հասարակությունը պետք է լուծի այդ հարցը: Իշխանությունից որևէ մեկի տրամադրությունը, շահը չի կարող որոշել

ՀՀ ապագան և ճակատագիրը: Այդ առումով հասարակությունը այսպիսի հավաքներով պետք է հստակ ասի իշխանությանը, որ ներսում թշնամիներ մի՛ փնտրեք, քաղաքական մեխանիզմը առողջացրեք, Եվրոպայի հետ լեզու գտեք, որովհետև մենք Եվրոպայի մաս ենք կազմում: Եթե դուք տեսնեք թե քանի հոգի է մտորում այս ամենի մասին, և տեսնեք այն բանակի հզորությունը, որը սեփական շահի հետևվից ընկած փակում է ազատ խոսքը, սուտ է գրում ամենուրեք, դուք անշուշտ պետք է հուսահատվեք: Դրա համար Հայաստանում գոյություն ունի հույսի և ոգու ճգնաժամ: Ես կցանկանայի, որ հասարակության մեջ չմարի լույսը: Եվ ես ուզում էի իշխանությանը խոհեմություն խորհուրդ տալ, և պետք չէ ուժերը չափել՝ պատանդներ պահելով: Պետք է նայել, թե ինչ է ուզում հասարակությունը և հասկանալ, որ մեր ճանապարհը Եվրոպայի հետ է:

Նաիրա Մելքումյան (ԼՂՀ նախկին արտգործնախարար). Ես ուզում եմ առաջարկել նման հավաքներ ո՛չ միայն Երևանում անցկացնել, և այսպիսի բարձրակարգ քաղաքական գործիչներ գնան և շփվեն ժողովրդի հետ : Մեր ժողովուրդը այսօր կարիք ունի լսելու խորը վերլուծություն, որովհետև քաղաքական համակարգը միայնակ այս իրավիճակից չի կարող դուրս գալ:

Վ. Օ. Եվ վերջում, համոռոտ ամփոփում:

Ա.Դ. Երկրորդ սերնդի բարեփոխումները ըստ ինձ դա մոլորություն է, որովհետև մենք ոչ միայն չենք ավարտել առաջին սերունդը, այլ նաև տապալել ենք այն: Առաջին սերնդի բարեփոխումները պետք է ապահովելին ժողովրդավարական քաղաքական համակարգ, ազատ

շուկայական տնտեսություն՝ երկուսն էլ մենք չունենք այսօր: Մենք կամ պետք է վերջապես սկսենք առաջին սերնդի բարեփոխումները կամ կա համակարգ որը շատ հանգիստ աշխատում է, որը ունի ավտորիտար քաղաքական համակարգ և ազատ շուկայի պայմաններ: Դա ևս աշխատում է: Այդ դեպքում Եվրոպական արժեքները իհարկե մի կողմ կդնենք, և ոչ մի վատ բան չենք ստանա եթե ապահովենք ավտորիտար համակարգի դեպքում ազատ շուկայական տնտեսություն: Երկրներ կան, որ դա կիրառում են և այդ իմաստով մեծ կարևորություն չէի դնի այս բանաձևի ընդունելուն: Իշխանությունը պետք է ընտրություն կատարի՝ կամ ժողովրդավարություն և ազատ շուկա, կամ քաղաքական ավտորիտարիզմ: Ես կտրականապես դեմ եմ տեղական կառավարման մարմինների քաղաքականացմանը համարելով, որ դա վերջնականապես կտապալի մեր քաղաքական համակարգը ընդհանրապես, և քաղաքացիական հասարակության նշույլները՝ հատկապես: Եթե մենք 2009 թ. ունենանք Երևանի քաղաքապետի ընտրություններ, ապա ՀՀԿ թեկնածուն կհաղթի:

Ա.Ռ. Ճգնաժամ բառի հենց հիմնական հարցադրումով հնարավոր եղավ ավելի խորքային ախտաճանաչում անել: Այդ տրամաբանությունը շարունակելով, ես պատճառների պատճառը տեսնում եմ հետևյալում. մեր հասարակությունը գումարային առումով արդարություն չի ուզում, պարզապես ուզում է, որ անարդարությունը իր դեմ չկիրառվի: Դրանք տարբեր բաներ են, մենք դեռ չենք հասել նրան, որ արդարությունը ընդունենք որպես բացարձակ արժեք: Այստեղից

բխում է այն իրավիճակը, որի մեջ մենք հայտնվել ենք: Մա հասարակական ախտորոշում է, քաղաքական ախտորոշումն էլ այն է, որ եթե ուզում ես այս երկրում բան փոխել, ուրեմն պիտի իշխանության գա: Ընդդիմության համար իշխանափոխությունը դառնում է միակ միջոցը, իշխանության համար էլ՝ իշխանություն պահպանելը: Եվ այս իրավիճակից դուրս գալու համար, եթե այսպիսի ընտրություն պիտի լինի ես ոչ մի լավ բան չեմ տեսնում: Անձեր կփոխվեն, բայց այդ ախտաճանաչումը կմնան նույնը: Մենք մեր հասարակությանը չենք բերի նրան, որ արդարության գործը բոլորիս գործն է և ամեն մեկս մեր մասով մի բան պիտի անենք, ոչինչ չի ստացվելու: Եվ դրա համար մենք ունենք մեր ժողովրդի համար ամենաընդունելի համակարգը:

Պետություն կառուցել, Ժողովրդավարություն հիմնել, մարդու իրավունքներ պաշտպանել, իրավական պետություն պաշտպանել: Խնդիրն այն է, որ ամեն ինչ բևեռացված է, նաև քաղաքական դաշտը: Քաղաքական դաշտում տեղ չկա կառուցողական մտքի համար, կամ պիտի իշխանություն լինես, կառուցողական մի բան ասելու համար, կամ պիտի ընդդիմություն լինես: Հիմա դաշնակցությունը ու՞ր գնա: Ամեն գնով իշխանության գալու խնդիր չունենք, հասկանում ենք, որ այս ամեն ինչը քանի չի փոխվել, երկրում լուրջ փոփոխություն չի կարող տեղի ունենալ:

Հ.Բ. Այն ինչ-որ ասում է ԵԽ-ն, որ բացառությամբ այն մարդկանց, որոնք սպանության հրամաններ են տվել, նրանք ի նկատի ունենին այն իրավապահ մարմիններին և իշխանավորներին, որոնք այդ հրամանները՝ դիպուկահարից սկսած միջև վերջ տվել են: Երկրորդ՝ կապված

երկխոսության հետ, հարցը այն չէ, որ մենք չունենք մարդիկ, որոնք ազատության մեջ են գտնվում և ունակ են երկխոսության, և հարցը այն չի, որ մենք ասում ենք պատանդ՝ օգտագործում ենք դեմագոգիա: Ուղղակի երկխոսության ժամանակ՝ կախված երկխոսության արդյունքներից, այդ մարդիկ ազատ կարձակվեն, կամ ճնշման կենթարկվեն, հնարավոր չէ այդ վիճակում գալ երկխոսության, երբ մարդիկ, քաղբանտարկյալներ, իրենց հայացքների համար դատապարտված արդեն հինգ տարով ոչ մի բանի համար, պետք է ազատ արձակվեն: Հիմա կա երկու լուծում: Դատական իշխանության անկախության լուծում. սա շատ լավ առիթ է, որովհետև իշխանությունը դեմ է տվել այդ քաղաքական պրոցեսներին ամենակոռումպացված և ամենակախյալ դատավորներին: Հիմա պահն է ազատվել այդ մարդկանցից: Եվ Ղարաբաղի հետ կապված լուծում: Մենք այսօր ունենք երեք խոչընդոտ: Ի՞նչ ունենք մենք բալանսի դնելու Ադրբեջանի դեմ: Ադրբեջանն ունի լայն հնարավորություններ, նավթ և այլն: Մենք կարող ենք ցույց տալ մեր ավելի քաղաքակիրթ և ժողովրդավար լինելը: Եթե խնդիրը լիներ Լյուքսեմբուրգի և Ադրբեջանի միջև, միանշանակ հարցը լուծված կլիներ: Կոստվոյի հարցը 15 տարի առաջ սկսվել է և այսօր արդեն ավարտվում է Կոստվոյի օգտին, որովհետև Միլոշեվիչը համարվում էր դիկտատոր և Հարավսլավիան՝ Սերբիայի պատճառով համարվում էր ոչ ժողովրդավարական երկիր: Իրականում մենք այսօր մի քիչ ավել, մի քիչ պակաս նույն պետությունն ենք ինչ Ադրբեջանը՝ ժողովրդավարության տեսակետից: Արդյո՞ք այս իշխանությունը պատրաստ է զոհաբերությունների գնալ հանուն Ղարաբաղի: Մենք ունենք թույլ

իշխանություն, ունենք նաև խնդիր, որ ԼՂ-ն ներկա չէ: Այս իրավիճակում, որ տեսնում ենք, որ Ղարաբաղի հարցը սխալ ուղղությամբ է գնում, առաջին հերթին պետք է ապահովենք ժողովրդավարությունը և ուժեղ իշխանություն: Ուժեղ նախագահ ունենալու հարցում մի ձև կա՝ գործող նախագահը պետք է հրաժարական տա, այդ պայմաններում գնանք նախագահ ընտրենք և բոլորս համարենք նրան նախագահ: Եվ կգա այդ պահը, որ գործող նախագահը դա ստիպված պիտի լինի անել: Ղարաբաղի հարցում դա կօգնի իհարկե, բայց նաև այլ գործեր պիտի անենք: ԼՂ-ն մենք պետք է հետ վերադարձնենք և մենք ենք նրան դուրս մղել: Ռոբերտ Քոչարյանն իր անձնական որոշումով դուրս մղեց ԼՂ-ն քանակցությունների սեղանից:

Վ.Օ. Ուզում եմ ավարտել, շնորհակալություն հայտնելով քննարկման բոլոր մասնակիցներին: Այսօր հրավիրված էին հասարակության բոլոր շերտերի ներկայացուցիչներ, բայց քննարկման ընթացքում կարծիքների միատեսակությունը նկատելի էր: Սա ինքնին խոսուն փաստ է, որ պետք է մեզ բոլորիս մտածելու լուրջ տեղիք տա: Շնորհակալություն: